ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 3, 1951 *Общественные науки*

ԼՐԱՏՈՒ

ԲՅՈՒԶԱՆԴԱԳԻՏԱԿԱՆ 5-ՐԴ ՍԵՍԻԱՆ

1950 թ. դեկտեմբերի 6—9-ը Մոսկվայում տեղի ունեցավ ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Պատմության ու Փիլիսոփայության բաժանմունքի սեսիան՝ նվիրված բյուզանդագիտության հարցերին։

Ակադեմիկոս Բ. Դ. Գրեկովի բացման խոսքից հետո, «Սովետական բյուզանդագիտության խնդիրները» մեծ հետաքրքրություն ներկայացնող զեկուցումով հանդես եկավ ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտի բյուզանդադիտական խմբի ղեկավար ակադեմիկոս Ս. Ա. Կոսմինսկին։ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի հաղթանակի հետևանքով,— նշեց Ե. Ա. Կոսմինսկին,— աշխարհիս ժողովուրդների մի զգալի մասը, տապալելով իմպերիալիզմի շղթաները, վիթխարի թռիչք կատարեցին և թևակոխեցին կոմունիստական հասարակարգ կառուցելու դարաշրջան։ Սովետական պատմագրության առջև այժմ ծառացած են նոր պրոբլեմներ ու հարցեր։

Մենք այժմ շատ ավելի լրջորեն ու խորությամբ պետք է ուսումնասիրենք Բյուզանդիայի, Հայաստանի, Վրաստանի, սլավոնական երկրների պատմությունը, մենք պետք է պարզենք, թե Հայաստանն ու Վրաստանն ինչ ազդեցություն են թողել Բյուզանդիայի արևելյան պրովինցիաների վրա, սլավոնները ինչ դեր են խաղացել Բալկաններում և այլն։

Հարցերի այս բարդ կոմպլեքսի ուսումնասիրման բնագավառում մեծ անելիք ունեն սովետական բյուզանդագետները, որոնք արդեն հրապարակ են հանել ու քննարկել մի շարք սկզբունքային հարցեր՝ Բյուզանդիայի պատմության պերիոդիզացիայի հարցը, ստրկատիրության անկման ու ֆեոդալիզմի հաղթանակի հարցը, սոցիալական շարժումների հարցը, գյուղացիության հարցը և այլն։

Այս հարցերի մշակման ընթացքում, անշուշտ, եղել են սխալներ։ Գերագնահատվել են նախասովետական շրջանի ռուս բյուզանդագետների աշխատությունները, ոչ բավարար չափով են քննադատվել բուրժուական բյուզանդագետների հակագիտական կոնցեպցիաները, հաճախ քննվել են երկրորդական նշանակություն ունեցող— մանրուքային հարցեր և այլն։

Այս սխալների մի մասն արդեն հաղթահարված է։

Մենք մեր հետագա աշխատանքների ընթացքում պետք է ամրապնդենք գիտական ամենօրյա կապերը Մոսկվայի, Լենինգրադի և Սովետական Միության այլ քաղաքների ու ռեսպուբլիկաների, առաջին հերթին՝ Հայաստանի և Վրաստանի բյուզանդադիտական կադրերի հետ։

Այդ դեպքում միայն մենք կկարողանանք լուծել ու մշակել մեր առաջ դրված հետևյալ կարևոր պրոբլեմներն ու հարցերը.

1) Բյուզանդական գյուղացիության պատմությունը.

2) Բյուզանդական քաղաքների պատմությունը.

3) Բյուզանդական ֆեոդալիզմի պերիոդիզացիան.

4) Պայքարը արևմտյան Եվրոպայի և հատկապես ամերիկյան ամենաառեակցիոն բյուզանդագիտության դեմ.

5) Բյուզանդագիտության պատմության և աղբյուրագիտության հարցերի մշակումը և այլն։

Այնուհետև ակադ. Ե. Ա. Կոսմինսկին խոսում է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Պատմության և Փիլիսոփայության բաժանմունքի և Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի միացյալ հոբելյանական սեսիայի մասին, որը տեղի ունեցավ 1950 թ. հոկտեմբերին Երևանում։ Այդ սեսիան ցույց տվեց,— ասում է Ե. Ա. Կոսմինսկին,— թե որքան արդյունավետ է համատեղ աշխատանքը։ Հայագիտությունը ի վիճակի է լուծելու մի շարք մութ հարցեր՝ կապված Բյուզանդիայի պատմության հետ, իսկ հայերեն հազարավոր ձեռագրերը, որոնք պահվում են ձեռագրական կուլտուրայի մեծահարուստ շտեմարան Մատենադարանում, մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև բյուզանդագիտության համար։

Ակադեմիկոս Ե. Ա. Կոսմինսկին հարց է բարձրացնում հայերեն սկզբնաղբյուրների հայերեն և ռուսերեն լեզուներով հրատարակման մասին։

Իր զեկուցման վերջում Ե. Ա. Կոսմինսկին շնորհավորեց բազմաշխատ բյուզանդագետ, Լենինգրադի համալսարանի պրոֆեսոր Մ. Վ. Լևչենկոյին, նրա ծննդյան 60-ամյակի կապակցությամբ։ Հոբելյարին ողջունեցին նաև Բ. Ռ. Գրեկովը, Ե. Է. Լիպշիցը և ուրիշներ։

Պրոֆ. Մ. Վ. Լևչենկոն զեկուցեց «Ի. Վ. Ստալինի «Մարքսիզմի վերաբերյալ լեզվաբանության մեջ» և «Լեզվաբանության մի քանի հարցերի շուրջը» աշխատությունների արժեքը սովետական բյուզանդագիտության համար» թեմայով։

Զեկուցողը ցույց տվեց ընկեր Ստալինի հանճարեղ աշխատությունների նշանակությունը սովետական լեզվաբանությունը փակուղուց դուրս բերելու և մարքսիստական լեզվաբանության զարգացման գործում և կանգ առավ հատկապես բյուզանդագիտական այն պրոբլեմների վրա, որոնք նոր լուծում են ստանալու ընկեր Ստալինի աշխատությունների լույսի տակ։ Պրոֆ. Լևչենկոն նշեց, որ չափազանց վատ է կազմակերպված գիտա-ստեղծագործական դիսկուսիաների և ազատ քննադատության գործը։

„Византийский Временник"-ում չեն հրատարակվում քննադատական հոդվածներ ու գրախոսականներ սովետական բյուզանդագետների աշխատությունների մասին։ Բյուզանդագետները քիչ են շփվում միմյանց հետ, գիտական սեսիաներ պարբերաբար չեն կազմակերպվում և չեն ապահովվում բոլոր բյուզանդագետների գործարար մասնակցությունն այդ սեսիաներին։

Սովետական բյուզանդագետները դեռ չեն կարողացել լուծել մի շարք կարևոր հարցեր (ե՞րբ է «Բյուզանդիայի սկիզբը», Բյուզանդիայի պատմության պերիոդիզացիայի և քաղաքների պատմության ու էության հարցերը և այլն)։ Այս և նման հարցերն իրենց լուծումը կստանան միայն մարքսիզմի կլասիկների աշխատությունների խորն ուսումնասիրության և առողջ գիտական դիսկուսիաների միջոցով։

Նույն օրը՝ դեկտեմբերի 6-ին, «Բյուզանդիայի քաղաքային բնակչության ժողովրդական շարժումները IV դարում և V դարի սկզբին» թեմայով զեկուցմամբ հանդես եկավ Սվերդլովսկի համալսարանի պրոֆեսոր Մ. Յա. Սյուզյումովը։

Զեկուցման հիմնական թեզերը հետևյալներն են.

Ստրուկների ռևոլուցիան (օգտագործում ենք զեկուցողի տերմինը) և բարբարոս ցեղերի արշավանքներն այն հիմնական ֆակտորներն էին, որոնք իրենց կնիքն են դնում ուշ Հռոմի և վաղ Բյուզանդիայի հասարակական կյանքի բոլոր բնագավառների վրա։ Բյուզանդիայի առանձնահատկությունը IV դարում այն էր, որ նա, ուժերի մեծ լարվածության և ներքին ու արտաքին քաղաքական ռեակցիայի գնով, կարողացավ հետաձգել ստրուկների ռևոլուցիայի հաղթանակը մի քանի դարով։ Այդ հաջողվեց, որովհետև Բյուզանդիայում կային տնտեսապես հզոր և առևտրի ու արհեստների կենտրոն հանդիսացող քաղաքներ և զարգացած ներքին շուկա, այլ խոսքով Բյուզանդիայում կային ուժեղ դասակարգեր ու դասեր, որոնք շահագրգռված էին ստրկատիրության պահպանմամբ։

Որո՞նք էին ռեակցիայի հաղթանակի հենարանը հանդիսացող այդ շերտերը։ Ըստ զեկուցողի՝ քաղաքի լյումպեն-պրոլետարները, որոնք կերակրվում էին ստրկատիրական հասարակության փշրանքներով և այն արհեստավորները, որոնք օգտագործում էին ստրկական աշխատանքը և որոնց համար կենսական նշանակություն ուներ ներքին շուկայի առկայությունը։

Եվ ահա, դեմագոգիայի տարբեր միջոցներով (բրիստոնեական քարոզ, կրկեսային ներկայացումներ, հասարակական ճաշկերույթներ և այլն), ստրկատիրական ռեակցիան իր կողմն է գրավում վերոհիշյալ շերտերին և դարձնում նրանց ռեակցիայի հենարան։ Սրանք էին պրոֆ. Մ. Յա. Սյուզյումովի զեկուցման հիմնական եզրակացությունները։

Սակայն չի կարելի չնշել նաև զեկուցման թերի կողմերը։

Զեկուցողը ուսումնասիրելով Բյուզանդիայի քաղաքների ժողովրդական շարժումները, աշխատեց էր արել ստրկատիրության դեմ ուժեղ օպոզիցիայի հիմնական բաղկացուցիչ շերտերին՝ ստրուկներին ու կոլոններին, ուստի և, ըստ էության, նա քննել էր ոչ թե ժողովրդական շարժումները (ինչպես վերնագրված էր զեկուցումը), այլ, վերջին հաշվով՝ ստրկատեր դասակարգի տարբեր շերտերի փոխհարաբերության ու բախումների պատմությունը։

Զեկուցման շուրջը բացված մտքերի փոխանակությանը մասնակցած ընկերները կանգ առան զեկուցման արժեքի, ինչպես և թերությունների ու վիճելի կողմերի վրա։

Սեսիայի հաջորդ նիստում (դեկտեմբերի 7-ին) զեկուցումներով հանդես եկան բյուզանդագետներ Զ. Վ. Ուդալցովան (Մոսկվա) և Ե. Է. Լիպշիցը (Լենինգրադ)։

Զ. Վ. Ուդալցովան ուսումնասիրելով VI դարի պատմագիր Պրոկոպիոս Կեսարացու աշխատությունները, բնութագրեց նրան որպես հին ստրկատիրական արիստոկրատիայի իդեոլոգ և սենատորական դասի շահերի պաշտպան, բացահայտեց նրա քաղաքական հայացքները և ցույց տվեց, որ նա թշնամական վերաբերմունք ունենալով ժողովրդական շարժումների հանդեպ, աղավաղված ու տենդենցիոզ է ներկայացրել այդ շարժումների մասին փաստերը։ Այնուամենայնիվ, նրա աշխատությունները հարուստ տվյալներ են պարունակում VI դարի Բյուզանդիայի ժողովրդական շարժումների պատմությունն ուսումնասիրելու համար։

Զեկուցողը մանրամասնորեն խոսեց 532 թ. ապստամբության, Հուլիանոսի ղեկավարությամբ Պաղեստինում ծավալված շարժման և բյուզանդական բանակում բռնկված ապստամբությունների մասին։ Հուստինիանոս կայսեր նվաճումներից հետո և նվաճողական գործողություններին զուգընթաց մասսայական ապստամբություններ են պոռթկում Բյուզանդիայի դեմ նաև Հյուսիսային Աֆրիկայում և Իտալիայում։

Հատկապես ուշադրության արժանի էին զեկուցողի բերած փաստերը (քաղված Պրոկոպիոսի «Գոթական պատերազմների պատմություն» աշխատությունից) Իտալիայի մասին։

Զ. Ուդալցովան համոզիչ կերպով ցույց տվեց, որ Իտալիայում Հուստինիանոսի բանակներն ստանում էին տեղական ստրկատերերի և գոթական վերնախավերի օգնությունը, և ընդհակառակը՝ բյուզանդական բանակների դեմ միասնական ճակատով դուրս էին գալիս Իտալիայի հարստահարվող մասսաները՝ ստրուկներն ու գյուղացիները և ազատ բարբարոսները։ Այսպիսով, Բյուզանդիայի դեմ ուղղված պայքարը վեր էր ածվում ժողովրդա-ազատագրական պատերազմի, ընդդեմ ստրկատիրական ռեակցիայի։

Զեկուցման շուրջը բացվեց մտքերի աշխույժ փոխանակություն։ Պրոֆ. Մ. Վ. Լևչենկոն և Ե. Է. Լիպշիցը գտան, որ զեկուցողը պետք է նկատի ունենար նաև այն հանգամանքը, որ Հուստինիանոսի ժամանակ նշանակալից չափով փոխվել էր ստրկատիրական արիստոկրատիայի և սենատորների կազմը։ Բարբարոսական ցեղերի վերնախավերից շատ ներկայացուցիչներ, որոնց շահագործման հիմնական եղանակը ֆեոդալականն էր, դարձել էին սենատորներ ու պետական բարձր պաշտոնյաներ բյուզանդական կայսրության մեջ։ Ուստի և հին շատ տերմիններ ու տիտղոսներ, Հուստինիանոսի ժամանակ արդեն, ստացել էին նոր բովանդակություն։

Ե. Է. Լիպշիցի զեկուցումը կրում էր «Պավլիկյաններն ու պատկերամարտները Բյուզանդիայում VIII—IX դարերում» վերնագիրը։

Պավլիկյան շարժման մասին բազմաթիվ ուսումնասիրություններ գոյություն ունեն, սակայն նրանք, ըստ մեծի մասին, շոշափում են աղբյուրագիտական հարցեր և կամ քննում են միայն պավլիկյանների կրոնա-դավանաբանական հայացքները։ Զեկուցողն իր առաջ խնդիր էր դրել, օգտագործելով նաև ուրիշների կողմից անուշադրության մատնված որոշ ժամանակագրական, վարքաբանական, դավանաբանական երկեր, քննության ենթարկել պավլիկյան շարժման և պատկերամարտության կապերի ողջ կոմպլեքսը։

VII դարի կեսերից պավլիկյան շարժումը լայն տարածում էր գտել կայսրության արևելյան պրովինցիաներում և Ասորիքի սահմաններում։ Կայսրությունը փորձում էր ռեպրեսիաների միջոցով կանխել շարժման հետագա տարածումը, սակայն անհետևանք (687—690 թթ.)։ Իսավրյան դինաստիայի ժամանակ վերաբերմունքը պավլիկյանների հանդեպ փոխվում է։ Ռազմակալվածատիրական դասի շահերը ներկայացնող Իսավրյան կայսրները VIII դարի 20-ական թթ. բանակցություններ են սկսում պավլիկյան ղեկավարների հետ, ձգտելով շարժումը դարմարեցնել իրենց պատկերամարտական քաղաքականությանը։ VIII դարի վերջերին՝ պատկերապաշտության ժամանակավոր ռեակցիայի տարիներին, ավելի է ուժեղանում պավլիկյանների և պատկերամարտների դաշինքը։ IX դարի երկրորդ տասնամյակից կայսրությունն արմատապես փոխում է իր քաղաքականությունը պավլիկյանների հանդեպ։ Սկսվում է դաժան հալածանքների մի շրջան, որը շարունակվում է նաև պատկերամարտ Լևոն V կայսեր ժամանակ։ 820 թ. պավլիկյաններն առաջին անգամ զենք են վերցնում կայսրության դեմ, միավորվում են հարստահարվող մասսաների այլ օպոզիցիոն խմբերի հետ (Թովմա Սլավոնի գլխավորած շարժման և այլն) և որպես միստիկական հերձված սկսած շարժումը վեր է ածվում բացարձակ զինված ապստամբության։

Մի շարք հաջողություններից հետո պավլիկյան շարժումը, նման միջնադարյան մյուս բոլոր գյուղացիական տարերային շարժումներին, պարտություն է կրում։ Սակայն շարժման գաղափարները շարունակում են տարածվել և հետագայում։ Բուլղարիայի բոգոմիլների և այլ ազգակից շարժումների մեջ ակնհայտ է պավլիկյան գաղափարների առկայությունը։

Շատ արժեքավոր էր Ե. Է. Լիպշիցի զեկուցման երկրորդ բաժինը, որտեղ ցույց էին տրված ու տարբերակված պավլիկյանների և պատկերամարտների սոցիալ-տնտեսական հիմքերը և գաղափարական դրույթները։

Պավլիկյան շարժումը ստրուկ-սերվերի և ընչազուրկ գյուղացիների շարժում էր։ Պավլիկյանները ձգտում էին արմատապես վերափոխել առկա հասարակական կարգերը։ Քարոզելով «աստծո որդիների հավասարություն» նրանք երազում էին քաղաքացիական և գույքային հավասարություն։

Պլեբեյա-դեմոկրատական պավլիկյան շարժման հակառակ, պատկերամարտներն արտահայտում էին ռազմա-կալվածատիրական դասի շահերը։ Պատկերամարտները ձգտում էին վանական հողատիրության հաշվին մեծացնել իրենց կալվածքները և որոշ ռեֆորմների միջոցով ամրացնել առկա հասարակական-քաղաքական հարաբերությունների հիմքերը։

Մեծ հետաքրքրություն ներկայացնող այս զեկուցումը զերծ չէր մասնակի թերություններից։ Առկա փաստերը, որքան էլ նրանք պատահական են ու ցաքուցրիվ, հնարավորություն են տալիս շարադրելու պավլիկյան շարժման գաղափարախոսությունն ու աշխարհայացքը։ Զեկուցողը ոչ բավարար չափով էր օգտագործել այդ հնարավորությունը։

Պավլիկյան շարժումը հիմնականում ծագեց ու տարածվեց բյուզանդական կայսրության արևելյան պրովինցիաներում, որոնցում էթնիկապես գերակշռում էին հայերը։ Շարժումը լայն չափով տարածվել էր նաև Հայաստանի պարսկական լծի տակ հեծող հատվածում։ Այս կարևոր հանգամանքը և մի շարք այլ փաստեր հնարավորություն են ընձեռնում ուսումնասիրողին պավլիկյան շարժման մեջ դիտելու նաև ժողովրդա-ազատագրական կողմը՝ հայ աշխատավորների պայքարը ընդդեմ բյուզանդական կայսրության։ Սակայն զեկուցումից բնավ չէր երևում շարժման այս հետաքրքիր կողմը։

Սեսիայի հաջորդ նիստում (դեկտեմբերի 7-ի երեկոյան) «Կոստանդին Միրանածին և Ռուսաստանը» արժեքավոր զեկուցմամբ հանդես եկավ պրոֆ. Մ. Վ. Լևչենկոն։

Մանրակրկիտ քննության ենթարկելով Կոստանդին Միրանածնի «Թեմերի մասին» և «Ժողովուրդների մասին» աշխատությունների այն հատվածները, որոնք վերաբերում են Ռուսաստանին և հյուսիսային սևծովափնյա շրջաններին, զեկուցողը ցույց տվեց, որ հակառակ բուրժուական նորմանիտ-պատմաբանների բարձր գնահատականի, Միրանածնի հաղորդած տեղեկությունները վստահելի չեն, գերազանցապես քաղված են պատահական, չստուգված աղբյուրներից, հաճախ հակասում են միմյանց, ուստի և նրանցից պետք է օգտվել շատ զգուշաբար՝ առաջնություն տալով տեղական աղբյուրների տեղեկություններին։

Հանդես գալով մտքերի փոխանակությանը պրոֆ. Հ. Կ. Կուսիկյանը հայտնեց, որ ինքը, տարիներ առաջ, նման եզրակացության է հանգել համեմատելով Միրանածնի հաղորդած տեղեկությունները հայերի ու Հայաստանի մասին՝ հայկական աղբյուրների հետ։

Դեկտեմբերի 8-ի նիստում ուշագրավ զեկուցում կարդաց սեսիայի ամենաերիտասարդ մասնակից, պատրաստված ու խոստումնալից բյուզանդագետ Ա. Պ. Կաժդանը։ Նրա զեկուցման թեման էր՝ «Գյուղացիական շարժումները Բյուզանդիայում X դարում և մակեդոնական դինաստիայի կայսրների ագրարային քաղաքականությունը»։

Արևմտա-եվրոպական և ռուսական բուրժուական բյուզանդագետները,— ասաց զեկուցողը,— աղավաղում են Մակեդոնյան դինաստիայի կայսրների ագրարային քաղաքականությունը, վերագրելով նրան գյուղացիության շահերի պաշտպանություն։ Այդ քաղաքականությունը կարող է ըմբռնվել միայն X դարի գյուղացիական շարժումների ու տիրող դասակարգերի տարբեր շերտերի բախումների ու պայքարի հետ շաղկապված։

X դարի ընթացքում Բյուզանդիայում բռնկվել են մի շարք գյուղացիական ապստամբություններ՝ Բարսեղ Մակեդոնացու գլխավորությամբ 982 թ. ապստամբությունը Օրսիկիա թեմում, պելոպոնեսյան սլավոնների ելույթը 943 թ. հարկային ծանր լծի դեմ, 971 թ. գյուղացիական շարժումը Կապադովկիայում, որն օգտագործվեց Վարդ Փոկասի կողմից այլ նպատակներով և այլն։

Ուսումնասիրելով այդ շարժումները, ժամանակի սոցիալ-տնտեսական հարաբերությունները և կայսրության հարկային քաղաքականությունը, զեկուցողը հանդում է այն եզրակացության, որ Մակեդոնյան դինաստիայի ագրարային օրենսդրությունը X դարի գյուղացիական շարժումների արդյունք էր։ Բյուզանդական կայսրները ստիպված էին մի փոքր թեթևացնել աշխատավորների դրությունը։ Ըստ որում այդ դինաստիայի ներկայացուցիչների մի մասը (օրինակ՝ Ռոմանոս Ա. Լեկապինը) ձգտում էր փոքր ինչ դուպել գյուղացիական հողամասերը յուրացնող և

աղատ հողագործներին կախյալ գրության մեջ գցող ֆեոդալների ախորժակը, միաժամանակ ուժեղացնելով հարկային լուծը, իսկ մյուս մասը (օրինակ՝ Հովհան Զմշկիկը) որոշ չափով թեթևացնում էր հարկային լուծը, բայց պայմաններ էր ստեղծում ֆեոդալական կալվածքների ծավալման ու աճման համար։

Ա. Պ. Կաժդանի զեկուցումը լսվեց մեծ հետաքրքրությամբ։

Բյուզանդական կերպարվեստի լավագիտակ մասնագետ Վ. Ն. Լազարևը հանդես եկավ Սեսիայում «XIV դարի վերջի բյուզանդական նկարչության նոր հուշարձաններ» թեմայով։ Նա հաղորդեց իր ուսումնասիրության արդյունքները Սերպուխովի Վիսոցկյան վանքի սրբապատկերների մասին, որոնք 1920—1937 թթ. ռեստավրացիայի ենթարկվելով այժմ պահվում են Տրետյակովյան թանգարանում (Մոսկվա) և Ռուսական թանգարանում (Լենինգրադ)։ Այդ սրբապատկերները նկարված են Կոստանդնուպոլսում, հույն նկարչի կողմից, 1387—1395 թթ. ընթացքում և հանդիսանում են բյուզանդական նկարչության անկման շրջանի գործեր։

Դրանց համեմատությունը Սավինո-Ստորոժևյան վանքում պահված ռուս նշանավոր նկարիչ Ռուբլևի սրբապատկերների հետ հստակորեն ցույց է տալիս, որ XIV դարում գեղարվեստական ստեղծագործության ծաղրության կենտրոնը Կոստանդնուպոլսից տեղափոխվել էր Մոսկվա։ Մոսկվան դարձել էր ողջ սլավոնական աշխարհի գեղարվեստական մշակույթի կենտրոն։

Վ. Ն. Լազարևի բերած հարուստ իլյուստրատիվ փաստերը ըստ ամենայնի հաստատում էին նրա եզրակացությունը։

Բ. Տ. Գորյանովի զեկուցումը նվիրված էր պալեոլոգների ժամանակաշրջանի աշխատավորական շերտերի գաղափարախոսությանը («Բյուզանդական ֆեոդալական հասարակության շահագործվող դասակարգերի հասարակական քաղաքական գաղափարախոսությունը ըստ պարականոն— апокриф գրականության»)։

Այս զեկուցումը Բ. Տ. Գորյանովի «Բյուզանդական կուլտուրան պալեոլոգների ժամանակ» ընդարձակ մենագրության մի հատվածն էր միայն, որում հեղինակը փորձ էր արել ուշ բյուզանդական պարականոն գրվածքների հիման վրա (որոնք ըստ զեկուցողի ժողովրդական ստեղծագործություններ են) ուսումնասիրել Բյուզանդիայի հարստահարվող մասսաների հասարակական-քաղաքական հայացքները, տնտեսական ու կենցաղային վիճակը և այլն։ Պարականոն գրվածքները հնարավորություն են տալիս ուսումնասիրելու նաև ժողովրդական խոսակցական լեզուն։

Սեսիայի վերջին նիստում, որը տեղի ունեցավ դեկտեմբերի 9-ին, լսվեց Լ. Խաչիկյանի հաղորդումը Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Պետական Ձեռագրատան (Մատենադարանի) պատմական կարևոր սկզբնաղբյուրների մասին և քննարկվեց ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Պատմության և Փիլիսոփայության բաժնի բյուրոյի կողմից հաստատվելիք որոշման նախագիծը սովետական բյուզանդագիտության վիճակի և խնդիրների մասին։

Որոշման նախագծում մի շարք կետեր կան, որոնք վերաբերում են հայագիտական և բյուզանդագիտական աշխատանքների կոորդինացման՝ Մոսկվայում, Լենինգրադում և Սովետական Միության այլ քաղաքներում ու ռեսպուբլիկաներում աշխատող բյուզանդագետների կապի ուժեղացման, հայկական կարևոր ձեռագիր սկզբնաղբյուրների հայերեն և ռուսերեն լեզուներով հրատարակման և մի շարք այլ կարևոր հարցերի։

Բյուզանդագիտության հարցերին նվիրված V սեսիան ցույց տվեց, թե ինչպիսի նշանակալից արդյունքների կարելի է հասնել նույն բնագավառի գիտական աշխատողների ջանքերը միևնույն պրոբլեմի վրա կենտրոնացնելով։ Սեսիայի զեկուցումները գերազանցապես նվիրված էին Բյուզանդիայի պատմության տարբեր շրջանների ժողովրդական-սոցիալական շարժումների ուսումնասիրմանն ու գնահատմանը։

Սովետական բյուզանդագետները, անտարակույս, այս կարևոր պրոբլեմի լուծման գործում գդալի հաջողություններ ունեն։

Սեսիայում միաժամանակ պարզվեց ,որ բյուզանդագիտական մի շարք կարևոր պրոբլեմներ (հատկապես Բյուզանդիայի պատմության պերիոդիզացիայի պրոբլեմը) դեռևս միատեղ քննության չեն ենթարկվել և չեն ստացել իրենց գիտական լուծումը։

Սեսիան ցույց տվեց նաև, որ սովետական բյուզանդագիտությունը հարստացել է երիտասարդ ու շնորհալի կադրերով, որոնք խորապես ուսումնասիրելով սկզբնաղբյուրները և զինված լինելով մարքս-լենինյան ուսմունքով, իրենց ավագ ընկերների հետ մեկտեղ, ի վիճակի են լուծելու բյուզանդագիտության առաջ ծառացած բարդ պրոբլեմները։

Լ. ԽԱՉԻԿՅԱՆ